2. Վահանակների վրա յուրաքանչյուր կուսակցության (կուսակցությունների դաշինքների) համար հատկացնել հավասարաչափ տարածք՝ 30x35 սանտիմետր (լայնություն x բարձրություն) չափերի:

3. Աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետներում ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«08» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2026 թվականի սեպտեմբերի 08-ի N 745-Ա որոշման

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՋԶԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈՋԶԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ

Հ/Հ	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ՀԱՍՑԵ	ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ
1	Ախուրյան	Գյումրու խճ. 38 շենքին կից պարիսպ	Պարիսպ
2	Ախուրյան	Հ.Դավթյան 61 շենք	Չգործող շինություն
3	Ախուրյան	Վազգեն Ա փողոց 88 շենքին կից պարիսպ	Պարիսպ
4	Ախուրյան	Նոր Ախուրյանի խճ. 1-ին նրբ. 6	Էլեկտրականության հենասյուն
5	Հովունի	1-ին փողոց, 11 շենք	Վարչական ղեկավարի նստավայր
6	Կառնուտ	Կամոյի խճ. 1 տան կից կանգառ	Կանգառ
7	Ոսկեհասկ	1-ին փողոց, 10 նրբ., 1 շենք	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ
8	Երազգավորս	2-րդ փողոց, 44 շենք	Վարչական ղեկավարի նստավայր
9	Ջաջուռ	2-րդ փողոց, 13 շենք	Պահեստ հանդիսացող շինություն
10	Առափի	1-ին փոցող, 117	Օժանդակ շինություն
11	Ազատան	48-րդ փողոց, 26	Պահեստ հանդիսացող շինություն
12	Ազատան	1-ին փողոց, 72	Պահեստ հանդիսացող շինություն
13	Կրաշեն	2-րդ փողոցում գտնվող կանգառ	Կանգառ
14	Մեծ Սարիար	4-րդ փողոցում գտնվող կանգառ	Կանգառ
15	Բասեն	6-րդ փողոց, 1փկղ. 8/1	Շինություն
16	Ջրառատ	1-ին փողոց, 16 շենք	Նախկին մանկապարտեզի շենք
17	Հայկավան	Նոր Թաղամաս 4-րդ փող, խաղահրապարակի պարիսպ	Պարիսպ
18	Ղարիբջանյան	Գյումրի-Արմավիր 7 հասցեին հարակից կանգառ	Կանգառ
19	Կապս	Մայրուղի 19 տան հարևանությամբ գտնվող կանգառ	Կանգառ

20	Գետք	5-րդ փողոց, 40	Նախկին կենցաղի տուն
21	Վահրամաբերդ	13-րդ փողոց, 3-րդ տնակ	Տնակ
22	Արևիկ	8-րդ փողոց, 25 շենք	Չօգտագործվող շինություն
23	Քեթի	2-րդ փողոց, 5/1 տնակ	Տնակ
24	Կարմրաքար	1-ին փողոց, 1-ին շենք	Նախկին առողջարանի շենք
25	Հացիկ	13-րդ փողոց, 2/1 շենք	Խաղասրահ
26	Շիրակ	8-րդ փողոց, 2 շենք	Վարչական ղեկավարի նստավայր
27	Ջաջուռավան	1-ին փողոց, 7-րդ տնակ	Տնակ
28	Լեռնուտ	1-ին փողոց, 15	Չօգտագործվող շինություն
29	Մայիսյան	1-ին փողոց, 25 տան հարևանությամբ գտնվող պատ	Պատ
30	Մարմաշեն	Ս.Էլբակյանի անվ.փողոց, 26/5	Մշակույթի տուն
31	Բենիամին	1-ին փողոց, 22 շենք	Ակումբ
32	Այգաբաց	6-րդ փողոց, 1 շենք	Գործարան
33	Ախուրիկ	1-ին փողոց, 2-րդ նրբ., 4/4 շենք	Երիտասարդական կենտրոն
34	Բայանդուր	8-րդ փողոց, 7 շենք	Վարչական ղեկավարի նստավայր
35	Փոքրաշեն	4-րդ փողոց, 1-ին նրբ., 6 շենքի հարևանությամբ	Պարիսպ
36	Կամո	10-րդ փողոց, 10/1 շենք	Գյուղապետարանի նախկին շենք
37	Հովիտ	2-րդ փողոց, 86 տան հարևանությամբ գտնվող կանգառ	Կանգառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 746-Ա

«08» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0627-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ 0,04700 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0627-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,04700 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,04700 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Մինաս Ավետիսյան փողոց, 20 հողամաս» հասցեն:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«08» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 747-Ա

«08» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-108-0034-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի տարածքում գտնվող, 08-108-0034-0008 կադաստրային ծածկագրով հողամասին և դրա վրա առկա շինությանը տրամադրել «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ, 18-րդ փողոց, 4 բնակելի տուն» հասցեն:

2. Տրամադրված հասցեն գրանցելու նպատակով սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«08» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 748-Ա

«09» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0624-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ 0,008774 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0624-0002 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,008774 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,008774 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, 3/4 հողամաս» հասցեն:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«09» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 749-Ա

«10» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ «ՅՈՒՌԷԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին և 2-րդ կետերի դրույթները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 250-Ն որոշման 1-ին կետով սահմանված N 1 հավելվածի 5-րդ կետի դրույթը և հիմք ընդունելով «ՅՈՒՌԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը որոշում եմ՝

1. «ՅՈՒՌԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հաշվառման համար 01097459, գրանցման համար 999.110.1586721, գրանցման ամսաթիվ 2026 թվականի հունիսի 01, իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան Նոր Նորքի 8-րդ զանգված 16 շենք բնակարան 2 գործունեություն իրականացնելու հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ախուրյան Ախուրյան-Գյումրի խճուղի 23) տրամադրել հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«10» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 750-Ա

10 սեպտեմբերի 2026 թվականի գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 2 ՀԱՍՑԵԻ 08-119-0027-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սոնիկ Ավետիկի Թորոսյանը (ծնված 10 մարտի 1960 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք ժառանգության վկայագիր 604-20260428-84-10039282) իրեն պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք 2 հասցեում գտնվող, 0,1728 հեկտար մակերեսով, 08-119-0027-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 260,3 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, մառանը, անասնաշենքը, ավտոտնակը, օժանդակ շինությունը և պարիսպները կառուցվել են 1960-1999 թվականները (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը): Նույն հողամասի վրա ինքնակամ կառուցված 8,63 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և հաարթակը կառուցվել են 2014 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2026PLJXZF ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի

դրույթներով, համաձայն նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի և 13-րդ կետի «բ» ենթակետերի, 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի

առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված, շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների սահմանված չափը՝ որը Քեթի բնակավայրի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է և հիմք ընդունելով Սոնիկ Ավետիկի Թորոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի 5-րդ փողոց, 15 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 260,3 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, մառանը, անասնաշենքը, ավտոտնակը, օժանդակ շինությունը և պարիսպները ճանաչել օրինական, առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2014 թվականին ինքնակամ կառուցված 8,63 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և հարթակը ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման վճարը սահմանել 10000 դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0743 գործակիցը:
4. Շինությունների օրինականացման համար հաշվարկված գումարը կազմում է 6412 (վեց հազար, չորս հարյուր տասներկու) դրամ:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետում նշված ընդհանուր գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի համասեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ № 751-Ա

«10» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0049-0045 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0049-0045 կադաստրային ծածկագրով «Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Ե.Չարենցի փողոց, 3-րդ անցուղի, 2» հասցեի գույքը վերահասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Եղիշե Չարենցի փողոց, 3-րդ անցուղի, 2/2 բնակելի տուն»:

2. Տրամադրված հասցեն գրանցելու նպատակով սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«10» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 752-Ա

«10» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0049-0070 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0049-0070 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Եղիշե Չարենցի փողոց, 3-րդ անցուղի, 2 հողամաս» հասցեն:

2. Տրամադրված հասցեն գրանցելու նպատակով սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«10» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 753-Ա

«10» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ «ՅՈՒՌԷԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԿԱՄ ԱԾԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5.2 կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 149-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին և 2-րդ կետերի դրույթները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 250-Ն որոշման 1-ին կետով սահմանված N 1 հավելվածի 7-րդ կետի դրույթը և հիմք ընդունելով «ՅՈՒՌԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը որոշում եմ՝

1. «ՅՈՒՌԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (հաշվառման համար 01097459, գրանցման համար 999.110.1586721, գրանցման ամսաթիվ 2026 թվականի հունիսի 01, իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան Նոր Նորքի 8-րդ զանգված 16 շենք բնակարան 2 գործունեություն իրականացնելու հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ախուրյան

Ախուրյան-Գյումրի խճուղի 23) տրամադրել հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվություն:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«10» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 սեպտեմբերի 2026 թվականի N 754-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 6-ՐԴ ՓՈՂՈՑ 5/2 ՀԱՍՑԵԻ 08-061-0001-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ռաֆիկ Վարդանի Նազարյանը (ծնված 1973 թվականի մայիսի 17-ին) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրեն և իր ընտանիքի անդամներ Ռաֆիկ Զավենի Նազարյանին (ծնված 1945 թվականի հունիսի 1-ին), Աշոտ Ռաֆիկի Գրիգորյանին (ծնված 1970 թվականի հուլիսի 7-ին), Ռուզաննա Ժորայի Տոնոյանին (ծնված 1970 թվականի հոկտեմբերի 8-ին) և Մելինե Աշոտի Նազարյանին (ծնված 1991 թվականի ապրիլի 17-ին) բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հայկավան բնակավայրի, Նոր թաղամաս 6-րդ փողոց, 5/2 հասցեում գտնվող, 0,12 հեկտար մակերեսով, 08-061-0001-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 145,11 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները կառուցվել են 1996 թվականից 1998 թվականը (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը): Նույն հողամասի վրա ինքնակամ կառուցված 109,1 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով անասնաշենքը և ծածկը կառուցվել են 2008 թվականից 2010 թվականը (2001 թվականի մայիսի 15-

ից հետո)։ Ինքնակամ շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2026V32JKX ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված, շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների սահմանված չափը՝ որը Հայկավան բնակավայրի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է և հիմք ընդունելով Ռաֆիկ Վարդանի Նազարյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հայկավան բնակավայրի, Նոր թաղամաս 6-րդ փողոց, 5/2 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառուցված 145,11 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա ինքնակամ կառուցված 109,1 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով անասնաշենքը և ծածկը ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության 36,22 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի յուրաքանչյուր

մեկ քառակուսի մետրի օրինականացման վճարը կազմում է 10000 դրամ, իսկ 72,88 քառակուսի մետր մակերեսով ծածկի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 դրամ, որոնց նկատմամբ կիրառվում է շինության տարածագնահատման գոտիականության 0,0743 գործակիցը:

4. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարը կազմում է 59401 (հիսունինը հազար չորս հարյուր·մեկ) դրամը՝, որից՝ 26911 (քսանվեց հազար ինը հարյուր տասնմեկ) դրամը անասնաշենքի օրինականացման արժեքն է, իսկ 32490 (երեսուներկու հազար չորս հարյուր իննսուն) դրամը՝ ծածկի օրինականացման վճարն է:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետում նշված ընդհանուր գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«10» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 755-Ա

«11» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄՈ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 8-րդ մասերի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Արման Գևորգի Խուրշուդյանի դիմումը **որոշում եմ՝**

1. Արման Գևորգի Խուրշուդյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:

2. Արման Գևորգի Խուրշուդյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 2026 թվականի սեպտեմբերի 11-ին և աշխատանքի սկիզբ համարել 2026 թվականի սեպտեմբերի 11-ը:

3. Աշխատավարձը՝ ըստ հաստատված հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«11» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ Ն 756-Ա

«11» սեպտեմբերի 2026 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ 17 ՀԱՍՑԵԻ 08-076-0037-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ռաֆիկ Վարդանի Նազարյանը (ծնված 1993 թվականի հունվարի 08-ին) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայրի, 10-րդ փողոց, 17 հասցեում գտնվող, 0,186 հեկտար մակերեսով, 08-076-0037-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 208,12 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և անասնաշենքը կառուցվել են 2007 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2026PYSDLQ ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, . կետերի, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի

պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված՝ շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների սահմանված չափը՝ որը Ղարիբջանյան բնակավայրի (Շիրակի մարզ, 16-րդ գոտի) համար 0,0874 է և հիմք ընդունելով Ռաֆիկ Վարդանի Նազարյանի դիմումը՝ որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ղարիբջանյան բնակավայրի, 10-րդ փողոց, 17 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված 208,12 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և անասնաշենքը ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության 159,38 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման վճարը կազմում է 10000 դրամ, իսկ 48,74 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 դրամ, որոնց նկատմամբ կիրառվում է շինության տարածագնահատման գոտիականության 0,0874 գործակիցը:
3. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարը կազմում է 164857 (մեկ հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր հիսունյոթ) դրամ, որից՝ 139298 (մեկ հարյուր երեսունինը հազար երկու հարյուր իննսունութ) դրամը բնակելի տան օրինականացման արժեքն է, իսկ 25559 (քսանհինգ հազար հինգ հարյուր հիսունինը) դրամը՝ անասնաշենքի օրինականացման վճարն է:
4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետում նշված ընդհանուր գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«11» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 757-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 8-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 10 ՀԱՍՑԵԻ 08-007-0025-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անահիտ Լյովայի Իգիթյանը (ծնված 1969 թվականի նոյեմբերի 21-ին) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Եղիշե Չարենցի փողոց, 8-րդ անցուղի, 10 հասցեում գտնվող, 0,09764 հեկտար մակերեսով, 08-007-0025-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 95,69 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, աստիճանահարթակները, ավտոտնակը, մառանը, ծածկը և պարիսպները կառուցվել են 2011 թվականից 2018 թվականը (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի

Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2026MGDPHC ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերի, 18-րդ կետի դ) ենթակետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված, շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների սահմանված չափը՝ որը Ախուրյան բնակավայրի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է և հիմք ընդունելով Անահիտ Լյովայի Իգիթյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Եղիշե Չարենցի փողոց, 8-րդ անցուղի, 10 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված 95,69 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, աստիճանահարթակները, ավտոտնակը, մառանը, ծածկը և պարիսպները ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի, ինչպես նաև ինքնակամ բացված թվով երկու պատուհանների, բացված թվով երկու դռների և թվով մեկ փակված դռան օրինականացման համար սահմանել 10000 դրամ, իսկ օժանդակ շինությունների համար 6000 դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,1209 գործակիցը:
3. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարը կազմում է 82326 (ութսուներկու հազար երեք հարյուր քսանվեց) դրամ, որից՝

17168 (տասնյոթ հազար մեկ հարյուր վաթսունութ) դրամը՝ բնակելի տան և աստիճանահարթակների օրինականացման արժեքն է, 59113 (հիսունիննը հազար մեկ հարյուր տասներեք) դրամը՝ ավտոտնակի, մառանի, ծածկի և պարիսպների օրինականացման արժեքն է, իսկ 6045 (վեց հազար քառասունհինգ) դրամը՝ դռների և ձևափոխված պատուհանների օրինականացման վճարն է:

4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետում նշված ընդհանուր գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«11» սեպտեմբերի 2026 թվական
գյուղ Ախուրյան